1. Մեր լավագույն օրերն անգին
Եվ զորեղ, թարմ ուժերն մարտական
Մենք կզոհենք Տեր Հիսուսին՝
Որպես նվեր պատվական, պատվական:
Ի՞նչն է այնքան մեզ հաճելի,
Քան Հիսուսին ծառայել,
Կյանքներս առողջ և սիրով լի
Տեր Հիսուսին նվիրել, նվիրել:

2. Լսո՞ւմ ես, մեզ Նա կանչում է,
Զոհվելու ժամ, եղբարք, արդ հնչեց,
Հապաղելու ժամանակ չէ,
Տե՛ս, Նա մեզ կյանք պարգևեց, պարգևեց:
Եղբարք, պահենք վեր մեր դրոշը
Անվամբ անհաղթ մեր Փրկչի,
Թող այրի Սուրբ Հոգու կրակ
Զոհերն մեր ի սեր խաչի, սեր խաչի:

3. Հիսուսով մենք միշտ համարձակ
Մեղքի դեմ շարունակ պիտ կռվենք,
Կորչում են, տես, բազում մարդիկ,
Բարի լուր նրանց հաղորդենք, հաղորդենք:
Թող սպառնա մեզ դաժան մահ,
Մեռնելուց չենք սարսափի,
Մեր երգերով թշնամուն՝ ահ,
Կստիպենք մենք՝ շուտ փախչի, շուտ փախչի: